Luys Lnyu®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հաշվետվություն Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից հրապարակված Մարդկային ներուժի զարգացման զեկույցի (2020թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....1

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 3

2.1. Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի հաշվարկման կարգը 3

2.2. Մարդկային ներուժի զարգացման այլ ցուցանիշների հաշվարկման կարգը 5

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ 7

3.1. Մարդկային ներուժի զարգացման մակարդակը Հայաստանում..... 7

3.2. Միջազգային և տարածաշրջանային համադրումներ 9

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ..... 11

4.1. Անհավասարության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս (ԱՄՆԶԻ)..... 11

4.2. Գենդերային զարգացման ինդեքս (ԳԶԻ).....12

4.3. Գենդերային անհավասարության ինդեքս (ԳԱԻ).....13

4.4. Մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս (ՄՄՆԶԻ) 15

5. ԱՄՓՈՓՈՒՄ 16

ՀԱՎԵԼՎԱԾ.....19

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՄՆԶԶ՝ մարդկային ներուժի զարգացման զեկույց

ՄՆԶԻ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս

ԱՄՆԶԻ՝ անհավասարության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս

ԳԶԻ՝ գենդերային զարգացման ինդեքս

ԳԱԻ՝ գենդերային անհավասարության ինդեքս

ՄՄՆԶԻ՝ մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս

ՀԱԵ՝ համախառն ազգային եկամուտ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականը համաշխարհային պատմության մեջ կամրագրվի որպես կորոնավիրուսային (COVID-19) աննախադեպ համավարակի ժամանակաշրջան: Ավելին, սա նաև հանրային կառավարման ճգնաժամի ժամանակաշրջան էր, քանի որ բացահայտվեց պետական ինստիտուտների խոցելիությունը առողջապահական և տնտեսական շոկերի կանխատեսման և չեզոքացման հարցերում: Կորոնավիրուսային համավարակի և դրա հարուցած ճգնաժամերի խորքային պատճառները, սակայն, կապված են մարդկանց և բնության փոխհարաբերությունների դիսբալանսի հետ:

Գիտնականները մշտապես ահազանգում էին, որ բնապահպանական չափանիշների անտեսման պայմաններում կարող են առաջանալ մարդկանց համար վտանգավոր և նույնիսկ մահացու հարուցիչներ (պաթոգեններ): Կորոնավիրուսային համավարակով վերոհիշյալ կանխատեսումը, ըստ էության, դարձավ իրականություն՝ խաթարելով աշխարհի երկրների մեծ մասի առողջապահական և մակրոտնտեսական կայունությունը:

Ակնհայտ է, սակայն, որ համավարակը մարդկանց և բնության փոխհարաբերությունների դիսբալանսի հնարավոր դրսևորումներից միայն մեկն է: Աճխածնային արտանետումների ներկա ծավալի պահպանման և կլիմայի փոփոխության պայմաններում մեծ է հավանականությունը, որ ապագայում էապես կնվազի մարդկանց կյանքի որակը: Իսկ մարդկային ներուժի ոչ արդյունավետ օգտագործումը անխուսափելիորեն կուղեկցվի այլ (հնարավոր է՝ ավելի խոր և սաստիկ) ճգնաժամերով:

Հենց հարցերի այս շրջանակին է նվիրված Մարդկային ներուժի զարգացման զեկույցի (ՄՆԶԶ-2020) 30-րդ հոբելյանական թողարկումը: Վերջինս սոցիալական անհավասարության, աղքատության և ցածր կենսամակարդակի խնդիրները փորձում է դիտարկել ներառական զարգացման համատեքստում: Ներառական զարգացումը և հատկապես բնապահպանական չափանիշների կարևորումը, թույլ կտա երաշխավորել, որ հաջորդ սերունդները կկարողանան ոչ միայն կենսագործել իրենց մարդկային ներուժը, այլև ապրել «կանաչ» և կայուն էկոհամակարգում:

Սույն աշխատանքը միտված է համակարգված և ամփոփ տեսքով ներկայացնելու ՄՆԶԶ-2020-ի՝ Հայաստանին վերաբերող հիմնական արդյունքները: Չնայած ինդեքսի հաշվարկը հիմնված է 2019-ի ցուցանիշների վրա, այդուհանդերձ, անհրաժեշտ է արձանագրել, որ 2020 թվականը Հայաստանի համար կրկնակի ծանր տարի էր մարդկային ներուժի տեսանկյունից: Իսկապես, ի լրումն կորոնավիրուսային ճգնաժամի՝ Ադրբեջանը սեպտեմբերի 27-ին

սանձազերծեց պատերազմ Արցախի Հանրապետության նկատմամբ: Պատերազմի բացասական ելքը և հատկապես մարդկային խեղված ճակատագրերը, մեծ հարված են հայ ժողովրդի և նրա ազգային արժանապատվության համար: Այս իրավիճակի հետևանքներից մեկը կարող է լինել մարդկային ներուժի մակարդակի անկումը, որը, սակայն, հնարավոր կլինի բացահայտել՝ հիմնվելով հաջորդ տարվա զեկույցի արդյունքների վրա:

Սույն վերլուծությունը փաստում է, որ 2019-ին մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (ՄՆԶԻ) ՀՀ-ում կազմել է 0.776՝ նախորդ տարվա 0.771-ի դիմաց: Այս ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում զբաղեցնում է 4-րդ հորիզոնականը՝ առաջ անցնելով միայն Ադրբեջանից: Մյուս ցուցանիշների մասով հարկ է արձանագրել հետևյալը. ըստ մարդկային ներուժի զարգացման ինդեքսի՝ անհավասարության հաշվառմամբ (ԱՄՆԶԻ), Հայաստանը Անդրկովկասում երկրորդն է, իսկ ըստ գենդերային զարգացման ինդեքսի (ԳԶԻ) և գենդերային անհավասարության ինդեքսի (ԳԱԻ)՝ առաջինը:

Կորոնավիրուսային համավարակի համատեքստում ՄՄԶԶ-2020-ի հեղինակները, նպատակ ունենալով քանակապես գնահատել երկրների սոցիալ-տնտեսական առաջընթացի կապը մոլորակային կայունության հետ, նախաձեռնել են աշխատանքներ նոր միջազգային ինդեքս կառուցելու համար: Ստացված ցուցանիշը, այն է՝ մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (ՄՄՆԶԻ), ցույց է տալիս, որ Հայաստանը այս չափանիշով տարածաշրջանում երրորդն է՝ զիջելով Վրաստանին ու Թուրքիային և գերազանցելով Ադրբեջանին ու Իրանին:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1. Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի հաշվարկման կարգը

Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (ՄՆԶԻ) արտացոլում է մարդկային զարգացման հետևյալ ուղղություններում արձանագրված ձեռքբերումները. երկար և առողջ կյանք (առողջություն), գիտելիքի հասանելիություն (կրթություն) և պատշաճ բարեկեցություն (կենսամակարդակ): ՄՆԶԻ-ն այս երեք ուղղությունների համար հաշվարկված ենթաինդեքսների միջին երկրաչափականն է: Ստորև հաշվարկի քայլերը նկարագրվում են առավել մանրամասն:

✓ **Քայլ 1. Ենթաինդեքսների կառուցում**

Յուրաքանչյուր ուղղության ենթաինդեքսը հաշվարկվում է համապատասխան ցուցանիշների ստանդարտացման միջոցով: Ընդ որում, առողջության և

կենսամակարդակի ենթաինդեքսները հիմնված են մեկական ցուցանիշների վրա՝ համապատասխանաբար *կյանքի սպասվող տևողություն* և *շնչային ՀՆԱ*: Իսկ կրթության ենթաինդեքսի հիմքում երկու ցուցանիշներ են՝ *կրթության սպասվող տևողություն* և *կրթության միջին տևողություն*: Ստանդարտացման նպատակը տարբեր չափման միավորներ ունեցող ցուցանիշների փոխակերպումն է 0-1 միջակայքին պատկանող ենթաինդեքսների: Այն իրագործվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ենթաինդեքս} = \frac{\text{փաստացի արժեք} - \text{նվազագույն արժեք}}{\text{առավելագույն արժեք} - \text{նվազագույն արժեք}}:$$

Հաշվի առնելով վերոհիշյալ ցուցանիշների պատմական տվյալները և մի շարք էմպիրիկ հետազոտություններ՝ ՄՆԶԶ-ում նվազագույն և առավելագույն արժեքները սահմանվել են ըստ Աղյուսակ 1-ի:

Աղյուսակ 1. Ցուցանիշների նվազագույն և առավելագույն արժեքները

Ենթաինդեքս	Ցուցանիշ	Նվազագույն	Առավելագույն
Առողջություն	Կյանքի սպասվող տևողություն (տարի)	20	85
Կրթություն	Կրթության սպասվող տևողություն (տարի)	0	18
	Կրթության միջին տևողություն (տարի)	0	15
Կենսամակարդակ	Շնչային ՀԱԵ (2017 PPP դոլար)	100	75,000

Ծանոթագրություն. *2017 PPP դոլարի* ներքո նկատի է առնված ցուցանիշի փոխարկումը միջազգային դոլարի՝ ըստ գնողունակության համարժեքության և 2017թ. հաստատուն գների:

Միակ հարցը, որ կարող է առաջանալ վերոհիշյալ նկարագրության համատեքստում, կապված է կրթության ենթաինդեքսի հաշվարկման հետ, քանի որ այն կազմված է երկու ցուցանիշներից: Համաձայն մեթոդաբանության՝ այս ենթաինդեքսը պետք է հաշվարկվի որպես այդ երկու ցուցանիշների ստանդարտացված արժեքների միջին թվաբանական:

✓ **Քայլ 2. Ենթաինդեքսների ագրեգացում**

ՄՆԶԻ-ն վերոհիշյալ երեք ենթաինդեքսների միջին երկրաչափականն է, այսինքն՝

$$\text{ՄՆԶԻ} = \left(I_{\text{առողջություն}} \cdot I_{\text{կրթություն}} \cdot I_{\text{եկամուտ}}\right)^{1/3}:$$

ՄՆԶԻ-ի հաշվարկի քայլերի նկարագրությունը ավարտենք Գծապատկեր 1-ով, որտեղ ամփոփված է ինդեքսի կառուցվածքը:

Գծապատկեր 1. ՄՆԶԻ-ի հաշվարկի գրաֆիկական պատկերը



Հիմնվելով ՄՆԶԻ-ի հաշվարկված տվյալների վրա՝ երկրները ընդունված է դասակագել հետևյալ տրամաբանությամբ. եթե ինդեքսը ցածր է 0.550-ից, ապա երկիրը համարվում է մարդկային ներուժի զարգացման *ցածր* մակարդակ ունեցող, 0.550-0.699-ի դեպքում՝ *միջին* մակարդակ, 0.700-0.799-դեպքում՝ *բարձր* մակարդակ, իսկ 0.800-ի և ավելի մեծ արժեքների դեպքում՝ *շատ բարձր* մակարդակ: Նշենք նաև, որ այս կրիտիկական շեմերը հաշվարկվել են ցուցանիշների բաշխումների քվարտիլների[1] հիման վրա:

2.2. Մարդկային ներուժի զարգացման այլ ցուցանիշների հաշվարկման կարգը

Անցնելով մարդկային ներուժի զարգացման այլ ցուցանիշների մեթոդաբանության հակիրճ նկարագրությանը՝ նկատենք, որ *անհավասարության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (ԱՄՆԶԻ)* նույնպես հաշվարկվում է որպես առողջության, կրթության և կենսամակարդակի ենթաինդեքսների միջին երկրաչափական՝ այն վերապահումով, որ նախապես այդ ենթաինդեքսները ճշգրտվում են՝ ելնելով անհավասարության հայտանիշից: Ընդ որում, ճշգրտումը կատարվում է անգլիացի տնտեսագետ Ատկինսոնի կողմից 1970-ին առաջարկված մոտեցմամբ[2]:

Գենդերային զարգացման ինդեքսը (ԳԶԻ) կառուցելիս ՄՆԶԻ-ն գնահատվում է կանանց և տղամարդկանց խմբերի համար առանձին-առանձին, այնուհետև հաշվարկվում է դրանց հարաբերությունը: Ինչ վերաբերում է *գենդերային անհավասարության ինդեքսին (ԳԱԻ)*, ապա այն մեծ մասամբ հիմնված է

[1] Քվարտիլներ են կոչվում այն երեք թվերը, որոնք ցուցանիշի բաշխումը տրոհում են այնպիսի չորս մասերի, որոնցում ընդգրկված են միևնույն թվով տարրեր:
[2] A. Atkinson, On the Measurement of Economic Inequality, Journal of Economic Theory, Vol. 2, No. 3, 1970, էջ 244–263:

սոցիալական և եկամտային անհավասարության գնահատման՝ Սեթ (2009)[3] աշխատանքում ձևակերպված մոտեցումների վրա: Բավական է նշել, որ ԳԱԻ-ն ունի նույն տնտեսագիտական բովանդակությունը, ինչ որ ԳԶԻ-ն: Միաժամանակ, տվյալները մեկնաբանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ԳԱԻ-ի դեպքում գենդերային անհավասարությունը աճում է ինդեքսի աճին զուգահեռ:

Վերոհիշյալ ինդեքսների, այդ թվում՝ դասական ՄՆԶԻ-ի մեթոդաբանության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել այստեղ:

Ելնելով Երկիր մոլորակին պատուհասած կորոնավիրուսային համավարակի էությունից՝ ՄՆԶԶ-2020-ում հեղինակները կառուցել են նոր փորձնական ինդեքս՝ *մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս (ՄՄՆԶԻ)*: Նպատակը դասական ՄՆԶԻ-ի ճշգրտումն է՝ նկատի ունենալով մարդկանց բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Ենթադրվում է, որ այս նոր ինդեքսի մշտադիտարկումը թույլ կտա իրականացնել այնպիսի տնտեսական քաղաքականություն, որի ներքո լավագույնս կհամադրվեն սոցիալ-տնտեսական առաջընթացի և մոլորակային կայունության նպատակները:

ՄՄՆԶԻ-ի հաշվարկման նպատակով դիտարկվում է երկու լրացուցիչ ցուցանիշ՝ ածխածնային արտանետումներ՝ 1 շնչի հաշվով և ռեսուրսների սպառում՝ 1 շնչի հաշվով: Առաջին ցուցանիշը ներկայացնում է արդյունաբերական գործընթացներում ածխի, նավթի, գազի այրման հետևանքով արտանետված ածխաթթու գազի զանգվածի հարաբերությունն է բնակչության միջին թվաքանակին: Երկրորդ ցուցանիշով քանակապես գնահատվում է վառելիքային, մետաղական, ոչ մետաղական ռեսուրսների անկայուն սպառման զանգվածի հարաբերությունը բնակչության միջին թվաքանակին: Ակնհայտ է, որ այս երկու ցուցանիշների մեծ արժեքները վկայում են շրջակա միջավայրի կայունության խախտման մասին:

Հաշվարկի առաջին քայլում վերոհիշյալ երկու ցուցանիշները ենթարկվում են ստանդարտացման՝ ընդունելով արժեքներ 0-1 միջակայքում: Այնուհետև հաշվարկվում է ճշգրտման գործակիցը՝ ստանդարտացված ցուցանիշների միջին թվաբանականի տեսքով: Վերջապես երրորդ քայլում ՄՆԶԻ-ի ճշգրտումը իրականացվում է հետևյալ բանաձևի հիման վրա.

$$\text{ՄՄՆԶԻ} = \text{ՄՆԶԻ} \cdot (1 - \text{ճշգրտման գործակից}):$$

[3] S. Seth, Inequality, Interactions, and Human Development, Journal of Human Development and Capabilities, Vol. 10, No. 3, 2009, էջ 375–396:

Վերոհիշյալ բանաձևից հետևում է, որ որքան մեծ է ածխածնային արտանետումների և ռեսուրսների անկայուն սպառման ծավալը, այնքան մեծ է ՄՄՆԶԻ-ի և ՄՆԶԻ-ի տարբերությունը, ինչպես նաև մարդկանց բացասական ներգործությունը մոլորակային կայունության վրա:

ՄՄՆԶԻ-ի մեթոդաբանության մանրամասներին կարելի է ծանոթանալ այստեղ:

Հարկ է ընդգծել, որ 2020թ. զեկույցի շրջանակներում մեթոդաբանական շտկումների արդյունքում ճշգրտվել են նախորդ տարիների ցուցանիշները: Ուստի, նախկին զեկույցների, ինչպես նաև այդ զեկույցների հիման վրա կատարված վերլուծությունների (այդ թվում՝ «Լույս» հիմնադրամի՝ նախորդ երկու տարիների վերլուծությունները[4]) համեմատ թվային անհամապատասխանությունների հանդիպելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սույն աշխատանքը հիմնված է թարմացված տվյալների վրա:

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ

3.1. Մարդկային ներուժի զարգացման մակարդակը Հայաստանում

2019 թվականին ՄՆԶԻ-ն ՀՀ-ում կազմել է 0.776, և Հայաստանը դիտարկվող 189 երկրների շարքում զբաղեցրել է 81-րդ հորիզոնականը: Այս ցուցանիշով ՀՀ-ն դասվում է մարդկային ներուժի *բարձր* մակարդակ ունեցող երկրների շարքին:

Հատկանշական է, որ չնայած 2019-ին ինդեքսի արժեքը 2018-ի համեմատ բարելավվել է 0.005 միավորով (Գծապատկեր 2), այդուհանդերձ, գրանցվել է դիրքի վատթարացում 9 հորիզոնականով. իսկապես, ըստ թարմացված տվյալների՝ 2018-ին ՀՀ-ն զբաղեցրել է 72-րդ հորիզոնականը՝ բնորոշվելով 0.771 միավոր ՄՆԶԻ-ով (տե՛ս սույն աշխատանքի հավելվածում ներառված «ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում» աղյուսակը):

Նշենք նաև, որ 1990-2019թթ. ժամանակահատվածում ՄՆԶԻ-ն տարեկան աճել է միջին հաշվով 0.59%-ով: Ընդ որում, 1990-2000թթ. միջին տարեկան աճի տեմպը կազմել է 0.23%, 2000-2010թթ.՝ 1.11%, իսկ 2010-2019թթ.՝ 0.42%: Այլ կերպ

[4] ՀՀ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը և ցուցանիշները (2019), http://bit.ly/3pbnOkj (այցելվել է 19.12.2020թ.):
ՀՀ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը և ցուցանիշները (2018), http://bit.ly/2WukVil (այցելվել է 19.12.2020թ.):

ասած՝ վերջին տարիներին ՄՆԶԻ-ի աճի տեմպը որոշակիորեն դանդաղել է, և հետագա առաջընթացը պահանջում է արմատական բարեփոխումներ և՛ կրթության, և՛ առողջության, և՛ կենսամակարդակի ասպարեզներում:

Գծապատկեր 2. ՄՆԶԻ-ի դինամիկան ՀՀ-ում



Աղյուսակ 2-ը ցույց է տալիս, որ ՄՆԶԻ-ի աճը 2018-2019թթ. ժամանակահատվածում կապված է առողջության և կենսամակարդակի ենթաինդեքսների բարելավման հետ: Իսկապես, 2019-ին կյանքի սպասվող տևողությունը կազմել է 75.1 տարի՝ նախորդ տարվա 74.9 տարվա դիմաց: Մյուս կողմից, հաշվետու ժամանակահատվածում շնչային եկամուտները՝ արտահայտված 2017 PPP դոլարով, աճել են 7.7%-ով: Ինչ վերաբերում է կրթության ենթաինդեքսի ցուցանիշներին, ապա դրանց մեծությունը մնացել է անփոփոխ:

Աղյուսակ 2. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում 1990-2019թթ.

	Կյանքի սպասվող տևողություն (տարի)	Կրթության սպասվող տևողություն (տարի)	Կրթության միջին տևողություն (տարի)	Շնչային ՀԱԵ (2017 PPP դոլար)	ՄՆԶԻ
1990	67.9	10.8	10.1	5,191	0.654
1995	68.9	10.2	10.4	3,111	0.627
2000	71.4	11.2	10.8	4,180	0.669
2005	72.6	11.4	10.9	7,753	0.712
2010	73.3	13.1	11.1	9,753	0.747
2015	74.5	13.0	11.7	11,774	0.768
2016	74.6	13.0	11.5	11,570	0.766
2017	74.8	13.0	11.3	12,543	0.769
2018	74.9	13.1	11.3	12,895	0.771
2019	75.1	13.1	11.3	13,894	0.776

Նկատենք նաև, որ Աղյուսակ 2-ում ներառված բոլոր ցուցանիշները 2019-ին ընդունել են իրենց պատմական միջիններից (հաշվարկված 1990-2019թթ. ժամանակահատվածի համար) բարձր արժեքներ:

3.2. Միջազգային և տարածաշրջանային համադրումներ

Անցնելով միջազգային համադրումներին՝ նկատենք, որ 2019 թվականի արդյունքներով Հայաստանը տարածաշրջանում զբաղեցնում է չորրորդ տեղը (0.776 միավոր, 81-րդ հորիզոնական)՝ առաջ անցնելով միայն Ադրբեջանից (Աղյուսակ 3): Առաջատարը Թուրքիան է (0.820 միավոր, 54-րդ հորիզոնական), որին հաջորդում են Վրաստանը (0.812 միավոր, 61-րդ հորիզոնական) և Իրանը (0.783 միավոր, 70-րդ հորիզոնական): Տարածաշրջանի հետնապահը Ադրբեջանն է, որը միջազգային վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 88–րդ հորիզոնականը՝ բնորոշվելով 0.756 միավոր ՄՆԶԻ-ով: Նկատենք, որ 2018 թվականի համեմատ փոխվել են միայն Վրաստանի և Իրանի տարածաշրջանային դիրքերը: Մասնավորապես, Իրանը երկրորդ տեղից տեղափոխվել է երրորդ տեղ՝ իր դիրքը զիջելով Վրաստանին:

Աղյուսակ 3-ը նաև հուշում է, որ Հայաստանը 2019-ին, ինչպես նախորդ տարի, ունի համեմատական առավելություն կրթության միջին տևողության ցուցանիշով՝ տարածաշրջանում զիջելով միայն Վրաստանին: Մյուս կողմից, նախորդ տարվա համեմատ իրավիճակը, ըստ երևույթին, բարելավվել է կենսամակարդակի տիրույթում: Սակայն մեթոդաբանության ուսումնասիրությունը մատնանշում է, որ 2019-ին փոփոխվել է կենսամակարդակի ցուցանիշը: Այսպես, եթե 2018-ի հաշվարկներում կիրառվում էր շնչային ՀԱԵ-ն՝ արտահայտված 2011-ի հաստատուն գներով, ապա 2019-ի հաշվարկները հիմնված են ըստ 2017-ի հաստատուն գների հաշվարկված շնչային ՀԱԵ-ի վրա[5]: Այլ կերպ ասած՝ Հայաստանի առաջխաղացումը կենսամակարդակի տիրույթում մեծ մասամբ հետևանք է տեխնիկական-հաշվարկային, այլ ոչ թե իրական տեղաշարժերի:

[5] Երկու դեպքում էլ շնչային ՀԱԵ-ն արտահայտված է միջազգային դոլարով՝ հաշվարկված ըստ գնողունակության համարժեքության:

Աղյուսակ 3. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում և տարածաշրջանի մյուս երկրներում 2019թ.

	Կյանքի սպասվող տևողություն (տարի)	Կրթության սպասվող տևողություն (տարի)	Կրթության միջին տևողություն (տարի)	Շնչային ՀԱԵ (2017 PPP դոլար)	ՄՆԶԻ
Թուրքիա	77.7	16.6	8.1	27,701	0.820
Վրաստան	73.8	15.3	13.1	14,429	0.812
Իրան	76.7	14.8	10.3	12,447	0.783
Հայաստան	75.1	13.1	11.3	13,894	0.776
Ադրբեջան	73.0	12.9	10.6	13,784	0.756

Միջազգային համադրումները նաև ցույց են տալիս, որ 2019-ի դրությամբ Հայաստանը ՄՆԶԻ-ով գերազանցում է ինչպես զարգացող երկրների, այնպես էլ աշխարհի միջինը (Աղյուսակ 4): Ընդ որում, առավելությունը զարգացող երկրների միջինի նկատմամբ կազմում է 0.087 միավոր, իսկ աշխարհի միջինի նկատմամբ՝ 0.039 միավոր: Նկատենք, որ համանման իրավիճակ էր ձևավորվել նաև 2018 թվականին: Հատկանշական է, որ Հայաստանի այս առավելությունը մեծ մասամբ պայմանավորված է առողջության և կրթության ենթաինդեքսներով: Ինչ վերաբերում է կենսամակարդակին, ապա Հայաստանը շնչային ՀԱԵ-ով գերազանցում է զարգացող երկրների միջինը 31.3%-ով, սակայն զիջում է աշխարհի միջինին 17.0%-ով:

Աղյուսակ 4. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում, մի շարք տարածաշրջաններում և երկրների խմբերում 2019թ.

	Կյանքի սպասվող տևողություն (տարի)	Կրթության սպասվող տևողություն (տարի)	Կրթության միջին տևողություն (տարի)	Շնչային ՀԱԵ (2017 PPP դոլար)	ՄՆԶԻ
Հայաստան	75.1	13.1	11.3	13,894	0.776
Տարածաշրջաններ					
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	74.4	14.7	10.4	17,939	0.791
Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան երկրներ	75.4	13.6	8.1	14,710	0.747
Հարավային Ասիա	69.9	11.7	6.5	6,532	0.641
Լատինական Ամերիկա և Կարիբյան երկրներ	75.6	14.6	8.7	14,812	0.766
Ենթասահարական Աֆրիկա	61.5	10.1	5.8	3,686	0.547
Արաբական երկրներ	72.1	12.1	7.3	14,869	0.705
Քիչ զարգացած երկրներ	65.3	9.9	4.9	2,935	0.538
Զարգացող երկրներ	71.3	12.2	7.5	10,583	0.689
Զարգացած երկրներ (OECD)	80.4	16.3	12.0	44,967	0.900
Աշխարհ	72.8	12.7	8.5	16,734	0.737

Ինչպես 2018 թվականին, այս տարի ևս ՄՆԶԻ-ի միջազգային վարկանիշային աղյուսակը գլխավորում է Նորվեգիան՝ այս անգամ 0.957 միավորով: Լավագույն եռյակում են նաև Իռլանդիան և Շվեյցարիան, որոնք բնորոշվում են 0.955-ական միավորով: Մյուս կողմից, վատագույն կատարողականը կրկին ցուցաբերել է Նիգերը՝ 0.394 միավորով, որին նախորդում են Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը՝ 0.397 միավորով, և Չադը՝ 0.398 միավորով:

Առանձին ցուցանիշների մասով հարկ է նկատել, որ երկարակեցությամբ առանձնանում են հատկապես Հոնկոնգը՝ 84.9 տարի, Ճապոնիան՝ 84.6 տարի, և Շվեյցարիան՝ 83.8 տարի: Մյուս կողմից, կյանքի սպասվող տևողությունը ամենակարճն է Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում՝ 53.3 տարի, Չադում՝ 54.2 տարի, և Լեսոթոյում՝ 54.3 տարի:

Կրթության միջին տևողությունը ամենաերկարն է Գերմանիայում՝ 14.2 տարի, որին հաջորդում են Շվեյցարիան, Կանադան և ԱՄՆ-ն՝ երեքն էլ 13.4 տարի ցուցանիշով: Ցուցանիշը ընդունում է ամենացածր արժեքը Բուրկինա Ֆասոյում՝ 1.6 տարի, որին նախորդում են Նիգերը՝ 2.1 տարի, և Մալին՝ 2.4 տարի: Բնականաբար, այսպիսի կրթական մակարդակի պարագայում միամտություն է ակնկալել մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործում և բավարար տնտեսական արդյունքներ:

Ինչ վերաբերում է կենսամակարդակին, ապա գնողունակության համարժեքության և 2017-ի հաստատուն գների հիման վրա հաշվարկված շնչային ՀԱԵ-ի կտրվածքով լավագույն արդյունքները արձանագրվել են Լիխտենշտայնում՝ 131,032 PPP դոլար, Կատարում՝ 92,418 PPP դոլար, և Սինգապուրում՝ 88,155 PPP դոլար: Մյուս կողմից, ամենաաղքատ երկրների եռյակում են Բուրունդին՝ 754 PPP դոլար, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը՝ 993 PPP դոլար, և Մալավին՝ 1,035 PPP դոլար:

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

4.1. Անհավասարության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս (ԱՄՆԶԻ)

Մեթոդաբանության առումով ԱՄՆԶԻ-ն կառուցված է այնպես, որ կրթական, առողջապահական և եկամտային անհավասարության բացակայության պարագայում այն հավասար է ՄՆԶԻ-ին, իսկ առկայության դեպքում՝ փոքր է վերջինից:

Աղյուսակ 5. ՄՆԶԻ-ն և ԱՄՆԶԻ-ն 2019թ.

	ՄՆԶԻ	ԱՄՆԶԻ	Կորուստը (տոկոս)
Վրաստան	0.812	0.716	11.8
Հայաստան	0.776	0.699	9.9
Իրան	0.783	0.693	11.5
Ադրբեջան	0.756	0.684	9.5
Թուրքիա	0.820	0.683	16.7
Բարձր ՄՆԶԻ-ով երկրներ	0.753	0.618	17.9
Զարգացող երկրներ	0.689	0.535	22.4
Աշխարհ	0.737	0.587	20.4

Համաձայն Աղյուսակ 5-ի՝ եթե 2019-ի դրությամբ ՄՆԶԻ-ին Հայաստանում կազմել է 0.776, ապա ԱՄՆԶԻ-ն գնահատվել է 0.699: Այլ կերպ ասած՝ Հայաստանում անհավասարության զսպող ազդեցությունը մարդկային ներուժի տեսանկյունից 9.9% է: Ավելի մեծ կորուստներ են արձանագրվել Թուրքիայում, Վրաստանում և Իրանում: Իսկ Ադրբեջանի դեպքում ԱՄՆԶԻ-ն տարբերվում է ՄՆԶԻ-ից 9.5%-ով: Արդյունքում Հայաստանը, ըստ ԱՄՆԶԻ-ի, տարածաշրջանում զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը՝ զիջելով միայն Վրաստանին: Ուշագրավ է, որ Թուրքիան, լինելով տարածաշրջանի առաջատար՝ ըստ ՄՆԶԻ-ի, տեղափոխվում է վերջին՝ հինգերորդ հորիզոնականը սոցիալական և եկամտային անհավասարության դիտարկման պարագայում: Աղյուսակ 5-ը նաև մատնանշում է, որ Հայաստանում անհավասարության բացասական ազդեցությունը մարդկային ներուժի զարգացման վրա ավելի փոքր է, քան աշխարհի, զարգացող երկրների և բարձր ՄՆԶԻ-ով երկրների (վերհիշենք, որ Հայաստանը համարվում է բարձր ՄՆԶԻ ունեցող երկիր) միջինը: Պատահական չէ, որ Հայաստանի ԱՄՆԶԻ-ն գերազանցում է վերոհիշյալ երեք միջինները:

4.2. Գենդերային զարգացման ինդեքս (ԳԶԻ)

ԳԶԻ-ի կառուցման տրամաբանությունն այնպիսին է, որ մեծ արժեքները (1-ին մոտ) վկայում են բարձր գենդերային հավասարության մասին: Այդ պատճառով երկրների դասակարգումը ըստ ԳԶԻ-ի իրականացվում է հետևյալ կերպ. մարդկային ներուժի զարգացման բնագավառում գենդերային հավասարությունը համարվում է *բարձր*, եթե շեղումը կատարյալ հավասարությունից փոքր է 2.5%-ից, *միջինից բարձր*՝ 2.5-5%-ի դեպքում, *միջին*՝ 5-7.5%-ի դեպքում, *միջինից ցածր*՝ 7.5-10%-ի դեպքում, և *ցածր*՝ 10%-ի գերազանցման դեպքում:

Աղյուսակ 6. ՄՆԶԻ-ն և ԳԶԻ-ն 2019թ.

	ՄՆԶԻ		ԳԶԻ	
	իգական	**արական**	**արժեք**	**խումբ**
Հայաստան	0.766	0.780	0.982	բարձր
Վրաստան	0.800	0.817	0.980	բարձր
Ադրբեջան	0.730	0.774	0.943	միջին
Թուրքիա	0.784	0.848	0.924	միջինից ցածր
Իրան	0.709	0.819	0.866	ցածր
Բարձր ՄՆԶԻ-ով երկրներ	0.736	0.766	0.961	-
Զարգացող երկրներ	0.659	0.717	0.919	-
Աշխարհ	0.714	0.757	0.943	-

Համաձայն Աղյուսակ 6-ի՝ 2019-ին ԳԶԻ-ն Հայաստանում կազմել է 0.982, ինչը նշանակում է, որ երկիրը բնորոշվում է բարձր գենդերային հավասարությամբ: Այս ցուցանիշով Հայաստանը դարձել է տարածաշրջանի առաջատարը՝ բարելավելով իր դիրքը և խումբը նախորդ տարվա նկատմամբ: Սա նշանակում է, որ գենդերային խտրականությունը չունի մեծ տարածում ՀՀ-ում, և հետևաբար դրա ազդեցությունը սոցիալ-տնտեսական գործընթացների վրա էական չէ:

4.3. Գենդերային անհավասարության ինդեքս (ԳԱԻ)

Ի տարբերություն ԳԶԻ-ի՝ ԳԱԻ-ի դեպքում ցածր արժեքներին համապատասխանում է բարձր գենդերային հավասարություն: ԳԱԻ-ի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է նկարագրել դրա բաղադրիչների էությունը, որոնք թվով հինգն են՝ *մայրական մահացության գործակից*, *դեռահասների ծնելիության մակարդակ*, *խորհրդարանում կանանց մասնաբաժին*, *առնվազն որոշակի միջնակարգ կրթություն ունեցող բնակչության մասնաբաժին*, *աշխատուժի մասնակցության մակարդակ*:

Աղյուսակ 7. ԳԱԻ-ն և դրա բաղադրիչները 2019թ.

	ԳԱԻ		Մայրական մահացության գործակից	Դեռահասների ծնելիության մակարդակ	Կանանց մասնաբաժինը խորհրդարանում (%)	Առնվազն որոշակի միջնակարգ կրթությամբ բնակչության մասնաբաժինը (%)		Աշխատուժի մասնակցության մակարդակ (%)	
	արժեք	հորիզոնական				իգական	արական	իգական	արական
Հայաստան	0.245	54	26	21.5	23.5	97.3	97.2	47.1	65.9
Թուրքիա	0.306	68	17	26.6	17.4	50.2	72.2	34.0	72.6
Ադրբեջան	0.323	73	26	55.8	16.8	93.9	97.5	63.4	69.7
Վրաստան	0.331	76	25	46.4	14.8	97.2	98.6	57.4	80.8
Իրան	0.459	113	16	40.6	5.9	67.4	72.8	17.5	71.5
Բարձր ՄՆԶԻ-ով երկրներ	0.340	-	62	33.6	24.5	69.8	75.1	54.2	75.4
Զարգացող երկրներ	0.463	-	224	47.2	22.7	53.0	62.3	45.6	75.7
Աշխարհ	0.436	-	204	43.3	24.6	61.0	68.3	47.2	74.2

Առաջին՝ ՀՀ-ում մայրական մահացության գործակիցը ընդունում է 26 արժեքը (Աղյուսակ 7): Սա նշանակում է, որ յուրաքանչյուր 100,000 ծննդի հաշվով 26 կին մահանում է հղիության հետ կապված խնդիրների պատճառով: Երկրորդ՝ դեռահասների ծնելիության մակարդակը 21.5 է, հետևաբար 15-19 տարեկան յուրաքանչյուր 1000 կանանց բաժին է ընկնում 21.5 ծնունդ: Երրորդ՝ կանանց (կին պատգամավորների) մասնաբաժինը խորհրդարանում 23.5% է: Չորրորդ՝ իգական (արական) սեռի պարագայում առնվազն որոշակի միջնակարգ կրթություն ունեցող բնակչության մասնաբաժինը 97.3% (97.2%) է, ինչը նշանակում է, որ 25 և ավելի տարեկան կին (տղամարդ) բնակչության 97.3% (97.2%)-ը ունի առնվազն որոշակի (հնարավոր է՝ ոչ լրիվ) միջնակարգ կրթություն: Եվ վերջապես՝ հինգերորդ, իգական (արական) սեռի պարագայում աշխատուժի մասնակցության մակարդակը 47.1% (65.9%) է, ինչը նշանակում է, որ աշխատանքային տարիքի՝ 15 և ավելի տարեկան կին (տղամարդ) բնակչության 47.1% (65.9%)-ը հանդիսանում է զբաղված կամ ակտիվորեն փնտրում է աշխատանք:

Հատկանշական է, որ Հայաստանը գենդերային հավասարության ասպարեզում տարածաշրջանի առաջատարն է ոչ միայն ըստ ԳԶԻ-ի, այլև ըստ ԳԱԻ-ի (Աղյուսակ 7): Ընդ որում, սա մեծ մասամբ պայմանավորված է դեռահասների ծնելիության ցածր մակարդակով, խորհրդարանում կանանց նշանակալի մասնաբաժնով, ինչպես նաև կրթության բնագավառում գենդերային խտրականության բացակայությամբ: Նշենք նաև, որ Հայաստանը, ինչպես ԳԶԻ-ի, այնպես էլ ԳԱԻ-ի գծով, ունի առավելություն զարգացող երկրների և աշխարհի միջինի համեմատ:

4.4. Մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս (ՄՄՆԶԻ)

Վերջին ինդեքսը, որ կդիտարկվի սույն վերլուծությունում ՄՄՆԶԻ-ն է: ԱՄՆԶ-ի նմանությամբ այն կառուցված է այնպես, որ մոլորակային կայունության լիակատար պահպանման պարագայում այն հավասար է ՄՆԶԻ-ին, իսկ էկոհամակարգի վրա մարդկային գործունեության բացասական ազդեցությունների դեպքում՝ փոքր է վերջինից:

Աղյուսակ 8. ՄՄՆԶԻ-ն 2019թ.

	ՄՆԶԻ	ՄՄՆԶԻ	Կորուստը (տոկոս)	Ածխածնային արտանետումներ, շնչային (տոննա)	Ռեսուրսների սպառում, շնչային (տոննա)
Վրաստան	0.812	0.772	4.9	2.6	9.1
Թուրքիա	0.820	0.746	9.0	5.2	16.2
Հայաստան	0.776	0.745	4.0	1.9	8.2
Ադրբեջան	0.756	0.720	4.8	3.7	6.3
Իրան	0.783	0.698	10.9	8.8	14.1
Բարձր ՄՆԶԻ-ով երկրներ	0.753	0.688	8.6	5.1	15.2
Զարգացող երկրներ	0.689	0.651	5.5	3.4	9.6
Աշխարհ	0.737	0.683	7.3	4.6	12.3

Ինչպես ներկայացված է Աղյուսակ 8-ում, 2019-ին ՄՄՆԶԻ-ն Հայաստանում կազմել է 0.745՝ դասական ՄՆԶԻ-ի 0.776-ի դիմաց: Սա նշանակում է, որ շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության բացասական ազդեցությունը կազմել է 4.0%: Հարկ է նկատել, որ մոլորակային կայունության խախտմամբ պայմանավորված այս կորուստը ամենափոքրն է տարածաշրջանում: Չնայած այս հանգամանքին՝ Հայաստանի դիրքը Անդրկովկասում բարելավվում է միայն մեկ հորիզոնականով, երբ դասակարգումը կատարվում է ըստ ՄՄՆԶԻ-ի, այլ ոչ թե ՄՆԶԻ-ի: Այսպես, 2019-ի արդյունքներով Հայաստանը տարածաշրջանում զբաղեցրել է երրորդ հորիզոնականը՝ զիջելով Վրաստանին ու Թուրքիային և գերազանցելով Ադրբեջանին ու Իրանին:

Մոլորակային կայունության առանձին բաղադրիչների մասով նշենք, որ Հայաստանում 1 շնչին բաժին ընկնող ածխածնային արտանետումները ավելի ցածր են, քան Անդրկովկասի մյուս երկրներում: Իրավիճակը բավական բարվոք է նաև ռեսուրսների՝ 1 շնչին բաժին ընկնող անկայուն սպառման ծավալի առումով. այս դեպքում առավել ցածր ցուցանիշով առանձնանում է միայն Ադրբեջանը: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Հայաստանը ՄՄՆԶԻ-ով գերազանցում է աշխարհի և զարգացող երկրների միջինը՝ կարելի է փաստել, որ մարդկային

ներուժի զարգացման գործընթացը ՀՀ-ում մեծ մասամբ զերծ է շրջակա միջավայրի կայունությանը սպառնացող ռիսկերից:

Գծապատկեր 3. Մարդկային ներուժի զարգացման ցուցանիշները ՀՀ-ում և աշխարհում 2019թ.



Ամփոփելով կարելի է արձանագրել, որ ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2019 թվականին, մարդկային ներուժի զարգացման բոլոր հայտանիշներով (ՄՆԶԻ, ԱՄՆԶԻ, ԳԶԻ, ԳԱԻ և ՄՄՆԶԻ) Հայաստանը բարձր է աշխարհի միջինից (Գծապատկեր 3)[6]:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

2020 թվականը փորձությունների տարի էր աշխարհի երկրների մեծ մասի առողջապահական և սոցիալ-տնտեսական համակարգերի համար: Աշխարհը «ցնցվեց» կորոնավիրուսային համավարակի ազդեցությամբ՝ չկարողանալով հակազդել խորացող ճգնաժամերին: ՄՆԶՀ-ի՝ 2020 թվականի թողարկումը չէր կարող չանդրադառնալ վերոհիշյալ մարտահրավերներին: Խնդիրն այն է, որ մարդկային ներուժի երեք հենասյուները՝ առողջությունը, կրթությունը և կենսամակարդակը, կրել են կորոնավիրուսային համավարակի անմիջական ազդեցությունը:

ՀՀ պարագայում համավարակից բխող սոցիալ-տնտեսական լարվածությունը խորացել է Արցախյան պատերազմի հետևանքով: Տնտեսական կորուստներին զուգահեռ՝ պատերազմի բացասական ելքը առաջացրել է հուսահատություն և

[6] Նկատենք, որ ԳԱԻ-ի ավելի փոքր արժեքը վկայում է ավելի մեծ գենդերային հավասարության մասին:

անկումային տրամադրություններ հասարակության լայն շերտերում: Ակնհայտ է, որ այս ամենը կարող է հանգեցնել մարդկային ներուժի մակարդակի և աշխատանքի արտադրողականության նվազման: Մյուս կողմից, գնողունակ պահանջարկի անկումը բացասաբար կանդրադառնա նաև տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական արդյունքների վրա: Հարկ է նկատել, սակայն, որ նշված էֆեկտները հնարավոր կլինի բացահայտել՝ հիմնվելով հաջորդ տարվա զեկույցի արդյունքների վրա:

Նման զարգացումների ֆոնին՝ սույն վերլուծությունը փաստում է, որ 2019-ին ՄՆԶԻ-ն Հայաստանում կազմել է 0.776, և Հայաստանը դիտարկվող 189 երկրների շարքում զբաղեցրել է 81-րդ հորիզոնականը, իսկ տարածաշրջանում՝ չորրորդ հորիզոնականը: Չնայած 2019-ին ՄՆԶԻ-ի արժեքը 2018-ի համեմատ բարելավվել է 0.005 միավորով, այդուհանդերձ, գրանցվել է դիրքի վատթարացում 9 հորիզոնականով: Ինդեքսի աճը 2018-2019թթ. ժամանակահատվածում կապված է առողջության և կենսամակարդակի ենթաինդեքսների բարելավման հետ: Ընդ որում, Հայաստանի առաջխաղացումը կենսամակարդակի տիրույթում մեծ մասամբ հետևանք է տեխնիկական-հաշվարկային, այլ ոչ թե իրական տեղաշարժերի:

Մարդկային ներուժի զարգացման մյուս ցուցանիշների կտրվածքով պատկերը, ընդհանուր առմամբ, առավել բարենպաստ է: Այսպես.

- 2019-ին ԱՄՆԶԻ-ն ՀՀ-ում գնահատվել է 0.699, և այս ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը: Այս արդյունքը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանում անհավասարության բացասական ազդեցությունը մարդկային ներուժի զարգացման վրա բավական ցածր է և կազմում է 9.9%: Տարածաշրջանում ավելի ցածր արդյունք գրանցվել է միայն Ադրբեջանում:
- 2019-ին ԳԶԻ-ն ՀՀ-ում կազմել է 0.982, և այս ցուցանիշով Հայաստանը դարձել է տարածաշրջանի առաջատարը: Հայաստանը գենդերային հավասարության ասպարեզում Անդրկովկասի առաջատարն է նաև ըստ ԳԱԻ: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ գենդերային խտրականությունը չունի մեծ տարածում ՀՀ-ում, և հետևաբար դրա ազդեցությունը սոցիալ-տնտեսական գործընթացների վրա էական չէ:
- 2019-ին ՄՄՆԶԻ-ն ՀՀ-ում կազմել է 0.745, և այս ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում զբաղեցրել է երրորդ հորիզոնականը: Հատկանշական է, որ շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության բացասական ազդեցությունը ՀՀ-ում կազմել է 4.0%: Մոլորակային կայունության խախտմամբ պայմանավորված այս կորուստը ամենափոքրն է տարածաշրջանում:

Ապագայի տնտեսական քաղաքականության մասով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մարդկային ներուժի երեք հենասյուները սերտորեն փոխկապակցված են: Ավելին, կրթական և առողջապահական բաղադրիչները պայմանավորում են տնտեսության կատարողականը առնվազն միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: Հետևաբար, Հայաստանի սոցիալ-տնտեսական առաջընթացը, այդ թվում՝ մարդկային ներուժի զարգացումը, խթանելու համար անհրաժեշտ է նախաձեռնել երկարաժամկետ ներդրումներ կրթության, հետազոտությունների, ինչպես նաև առողջապահության ոլորտներում: Մարդկային ներուժի բարձր մակարդակը միայն կարող է հիմքեր ստեղծել 21-րդ դարին հարիր նորարարական տնտեսություն կառուցելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում

ՄՆԶԻ հորիզոնական (2019թ.)	Երկիր	Կյանքի սպասվող տևողություն (տարի)	Կրթության սպասվող տևողություն (տարի)	Կրթության միջին տևողություն (տարի)	Շնչային ՀԱԵ (2017 PPP դոլար)	ՄՆԶԻ (2019թ.)	ՄՆԶԻ հորիզոնական (2018թ.)	ՄՆԶԻ հորիզոնականի փոփոխություն
Մարդկային ներուժի զարգացման շատ բարձր մակարդակ								
22	Սլովենիա	81.3	17.6	12.7	38,080	0.917	24	2
27	Չեխիա	79.4	16.8	12.7	38,109	0.900	26	-1
29	Էստոնիա	78.8	16.0	13.1	36,019	0.892	30	1
34	Լիտվա	75.9	16.6	13.1	35,799	0.882	35	1
35	Լեհաստան	78.7	16.3	12.5	31,623	0.880	34	-1
39	Սլովակիա	77.5	14.5	12.7	32,113	0.860	39	0
40	Հունգարիա	76.9	15.2	12.0	31,329	0.854	42	2
43	Խորվաթիա	78.5	15.2	11.4	28,070	0.851	44	1
48	Մոնտենեգրո	76.9	15.0	11.6	21,399	0.829	48	0
49	Ռումինիա	76.1	14.3	11.1	29,497	0.828	49	0
51	Ղազախստան	73.6	15.6	11.9	22,857	0.825	53	2
52	Ռուսաստան	72.6	15.0	12.2	26,157	0.824	49	-3
53	Բելառուս	74.8	15.4	12.3	18,546	0.823	49	-4
56	Բուլղարիա	75.1	14.4	11.4	23,325	0.816	55	-1
Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակ								
61	Վրաստան	73.8	15.3	13.1	14,429	0.812	63	2
64	Սերբիա	76.0	14.7	11.2	17,192	0.806	65	1
69	Ալբանիա	78.6	14.7	10.1	13,998	0.795	68	-1
73	Բոսնիա և Հերցեգովինա	77.4	13.8	9.8	14,872	0.780	76	3
74	Ուկրաինա	72.1	15.1	11.4	13,216	0.779	78	4
81	Հայաստան	75.1	13.1	11.3	13,894	0.776	72	-9
88	Ադրբեջան	73.0	12.9	10.6	13,784	0.756	88	0
90	Մոլդովա	71.9	11.5	11.7	13,664	0.750	91	1
106	Ուզբեկստան	71.7	12.1	11.8	7,142	0.720	107	1
111	Թուրքմենստան	68.2	11.2	10.3	14,909	0.715	112	1
Մարդկային ներուժի զարգացման միջին մակարդակ								
120	Ղրղզստան	71.5	13.0	11.1	4,864	0.697	120	0
125	Տաջիկստան	71.1	11.7	10.7	3,954	0.668	126	1

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*